ՆԱԽԱՌՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՎԵՐ

1-ին փուլ

«ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 13,

Հրավերի նկարագիր՝ մասնագիտացված շինարարական կազմակերպությունները հրավիրում են նախառրակավորման՝ Բանկի Գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում շինարարական գործընթացներում ներգրավելու նպատակով:

Սույն հրավերով սահմանված պայմաններին բավարարող մասնակիցները կընդգրկվեն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախառրակավորված մասնակիցների ցանկում և սույն հրավերի հրապարակման պահից մեկ տարվա ընթացքում ուղղակիորեն կկարողանան մասնակցել Բանկի կողմից իրականացվող շինարարական ծրագրերի շրջանակներում կազմակերպվող գնման մրցույթներին:

Նախառրակավորման փուլում կընդգրկվեն բոլոր այն մասնակիցները, որոնք կներկայացնեն սույն հրավերի շրջանակներում պահանջվող բոլոր փաստաթղթերը և կբավարարեն սահմանված չափանիշներին:

Հետաքրքրված մասնակիցներից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և նշված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումները՝

Նախառրակավորման չափանիշներ՝

- ՀՀ պետական լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիա (շինարարության իրականացում, ըստ քաղաքաշինության հետևյալ ոլորտների՝ հասարակական և արտադրական)
- առնվազն 2 տարվա փորձ տվյալ ոլորտում, կազմակերպությունների տարածքների վերակառուցում/վերանորոգում (կատարած աշխատանքների ու դրանց ծավալների մասին կազմակերպության տնօրենի կողմից վավերացված տեղեկանք), խոշոր ընկերություններում կատարված աշխատանքների ցանկ, բանկային/ֆինանսական ոլորտում կատարված աշխատանքները կարող են դիտարկվել որպես առավելություն:

- մեկ օրացուցային տարվա ընթացքում 50 000 000 (Հիսուն միլիոն) և ավել կատարված աշխատանքների հիմքեր:
- Հարկային պարտավորությունների առկայության կամ բացակայության մասին տեղեկատվություն, որը չի կարող մեկ ամսից ավել վաղեմություն ունենալ:

Նախաորակավորում կարող են ստանալ մասնակից այն իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք և որոնց սեփականատերերը կամ բաժնետերերը

- ներգրավված չեն կամ ներգրավված չեն եղել սնանկության վարույթներում կամ չեն հանդիսացել սնանկության վարույթում ընդգրկված իրավաբանական անձի սեփականատեր կամ բաժնետեր,
- չունեն չկատարված պարտավորություն որի գծով առկա է դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- վերջին երեք տարիներին չեն ունեցել չկատարված պարտավորություն որոնց գծով առկա է եղել դատական գործ կամ հարկադիր կատարման վարույթ,
- նրանց վերաբերյալ առկա չի եղել հարուցված քրեական գործ կամ հարուցված քրեական գործը չի ավարտվել արդարացնող ակտով:

Փաստաթղթերի ներկայացման կարգ՝

Փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով բացառապես procurement@idbank.am էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով՝ նշելով «ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ մասնագիտացված շինարարական կազմակերպություն »:

Հարցերի դեպքում դիմել՝ Սոնյա Ղևոնդյանին՝ հեռ. 093 04 08 08,

Ներկայացման լեզու՝ հայերեն,

Ժամկետ՝ 10/01/2025թ.:

2-րդ փուլ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ նախաորակավորումը ստացած անձանց՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ կողմից տարվա ընթացքում կուղարկվեն համապատասխան ծավալաթերթ, շինարարական աշխատանքների կատարման վայր, գծագրեր և տեխնիկական բնութագիր ներառող հարցումներ՝ գնային առաջարկ ներկայացնելու համար:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ պարունակող փաստաթղթերը ներկայացվում են ծրարավորված, որը պետք է լինի սոսնձված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարը և Մասնակցի կազմած փաստաթղթերը պետք է ստորագրված լինի անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի օրինական ներկայացուցչի կամ նրանց լիազորված անձի կողմից:

Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի պետք է ներառի փոխադրման (Բանկի գլխամասային գրասենյակ), ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը:

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐԸ Ներկայացնել բացառապես Սոնյա Ղևոնդյանին (կոնտակտային տվյալներ՝ հեռ 093 04 08 08)